ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

16 օգոստոս 2021թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

Վանաձորի կամերային նվագախմբի համերգի համար ֆինանսական աջակցության վերաբերյալ

Հարգելի պարոն Ասլանյան

Վանաձորի կամերային նվագախումբը նախատեսում է կազմակերպել հայ մեծանուն կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանի 100- ամյակին նվիրված հոբելյանական համերգ: Համերգի իրականացման համար անհրաժեշտ է պատվիրել Ա. Բաբաջանյանի 12 ստեղծագործությունների գործիքավորումներ՝ նվագախմբի համար: Կամերային նվագախմբի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գայանե Հարությունյանը համայնքապետարանին խնդրում է 360 000 (երեք հարյուր վաթսուն հազար) դրամ աջակցություն՝ 12 ստեղծագործությունների գործիքավորման համար:Այս ստեղծագործությունները կլինեն հարուստ ժառանգություն նվագախմբի համար և կփոխանցվեն սերունդներին: Համերգի կայացման համար անհրաժեշտ գումարը հատկացնելու նպատակով, խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան բաժնին՝ ավագանու որոշման նախագիծ կազմելու առաջիկա նիստին ներկայացնելու համար:

Զեկուցող՝ ԳՈՌ ԲԱԴՅԱՆ